ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ, ԿԱՐԻՔՆԵՐ, ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Առցանց քննարկումների արդյունքների վերլուծություն

«Երիտասարդները պատերազմից հետո. մարտահրավերներ, կարիքներ, լուծումներ» առցանց քննարկումների շարքն իրականացվել է **«Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ** կողմից, ԴԱՏԱ գործընկերների հետ համագործակցությամբ, «ԴԱՏԱ. տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» ծրագրի շրջանակներում, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ:

ԴԱՏԱ ծրագրի նպատակն է բարելավել ՔՀԿ-ների՝ տվյալներ հավաքագրելու, վերլուծելու և դրանք քաղաքականություններ մշակողներին արդյունավետորեն հաղորդելու կարողությունը, ինչպես նաև խթանել միջոլորտային համագործակցությունը՝ ստեղծելով կապեր և ներգրավելով ՔՀԿ-ներին և Կառավարությանը փաստերով հիմնավորված քաղաքականությունների մշակման համագործակցության մեջ:

ԴԱՏԱ գործընկերներն են **Եվրասիա համագործակցություն հիմնադրամը, Բուն TV հիմնադրամը, ՍՈՑԻԵՍ փորձագիտական կենտրոնը, Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն ՀԿ**-ն և **ՍՈՍԵ կանանց հիմնահարցեր ՀԿ**-ն:

Առցանց քննարկումների շարքն ու վերլուծությունն իրականացվել են Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները և ներկայացված բովանդակությունը միմիայն դրանց հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 5

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 5

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին անսպասելի հայտնված Քովիդ-19 համավարակը, հետո սեպտեմբերին սանձազերծված արցախյան երկրորդ պատերազմը ճգնաժամեր էին, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել կյանքի կազմակերպման բոլոր ոլորտների վրա և հասարակության բոլոր խմբերի վրա, ներառյալ երիտասարդները: Փոփոխություններ են տեղի ունեցել նրանց առօրյայում և կենսակերպում՝ ազդելով կրթության, զբաղվածության, արժեքային պատկերացումների վրա:

«ԴԱՏԱ. տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» ծրագրի շրջանակում երիտասարդների հետ իրականացված քննարկումների խնդիրներն էին մինչպատերազմյան և հետպատերազմյան շրջանում նրանց առօրյայի փոփոխությունների, սպասելիքների ու մոտիվացիայի վերաբերյալ տեղեկատվության ստացումը, ինչպես նաև նոր ստեղծված պայմաններում երիտասարդների ներուժի օգտագործման և կարիքներին արձագանքելու նպատակով լուծումներ գտնելը:

Աշխատանքում ներկայացված են երիտասարդների հետ քննարկումների արդյունքում դուրս բերված մինչպատերազմյան և հետպատերազմյան շրջանում նրանց արժեքային փոփոխությունները, ճգնաժամային իրավիճակներում և, առհասարակ, նրանց անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները, ապագայի հանդեպ պլանները և դրանց մասին պատկերացումները, ինչպես նաև ՔՀԿ-ների և ՏԻՄ-երի դերը երիտասարդներին ներգրավելու և նրանց համար առավել թիրախային ծրագրեր իրականացնելու հարցերը: Աշխատանքի վերջին հատվածում ներկայացված են արդյունքների քննարկումն ու վերլուծության հիման վրա դուրս բերված առաջարկները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«ԴԱՏԱ. տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» ծրագրի շրջանակում իրականացված քննարկումների նպատակն է վեր հանել 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված արցախյան պատերազմից առաջ և հետո երիտասարդների առօրյայում և կենսակերպում տեղի ունեցած փոփոխությունները, սպասելիքները, ծագած մարտահրավերներն ու դրանց դիմակայման լուծումները և բացահայտել երիտասարդների կարիքները հետպատերազմյան շրջանում:

Իրականացվել է երկու խմբային քննարկում, որին մասնակցել են երիտասարդներ Արագածոտնի և Տավուշի մարզերի տարբեր համայնքներից: Քննարկումներին ընդհանուր առմամբ մասնակցել են 31 երիտասարդներ:

Քննարկումներն իրականացվել են առցանց՝ օգտագործելով Zoom ծրագիրը:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Խմբային քննարկմանը մասնակցած երիտասարդների հետ քննարկվել են արժեքների, առօրյայի և կենսակերպի փոփոխությունների, ճգնաժամային իրավիճակների ժամանակ երիտասարդների դերի, երիտասարդներին անհրաժեշտ հմտությունների և կարողությունների, որոշումների կայացման գործընթացներում և տարբեր ծրագրերում նրանց ներգրավվածության հարցերը: Ժամանակային առումով անդրադարձ է կատարվել ինչպես պատերազմից առաջ իրավիճակին, այնպես էլ պատերազմից հետո տեղի ունեցած փոփոխություններին:

Խոսելով հայաստանյան երիտասարդներին բնորոշ արժեքներից՝ քննարկման մասնակիցները ամենաշատը կարևորել են անձնական արժանապատվությունը, կամքի ուժը և պայքարելու համառությունը, հավատարմությունը, նորարարական ոգին և սերը: Նշվածներից բացի, մինչև պատերազմը որոշ երիտասարդների շրջանում առկա էին նաև այնպիսի արժեքներ, ինչպիսիք են նյութական բարեկեցությունը, սեփական դիրքերը ամրապնդելը, որոնք մասնակիցների կողմից դիտարկվում են բացասական համատեքստում և նշվում են որպես թե անձնական, թե հասարակական մակարդակներում զարգացմանը խոչընդոտող արժեքներ: Հետպատերազմյան շրջանում երիտասարդների մոտ աճել է հայրենասիրության զգացումը, որը մասնակիցներից ոմանք կապում են հայրենիքի մի մասի կորստի հետ: Բացի այդ, ըստ մասնակիցների, մեծացել է պայքարելու համառության ու կամքի ուժի արժեքի գիտակցումն ու

կարևորումը, քանի որ, առհասարակ, առաջ գնալու և զարգանալու համար առաջնայինը հենց այս արժեքն է:

Ի լրումն նշվածների, հետպատերազմյան շրջանում նկատվել է նաև որոշակի արժեքների արժեզրկում կամ բացասական արժեքների տարածում: Մասնավորապես՝ նշվում է անհանդուրժողականության ավելացումը, համերաշխության և հարգանքի պակասը, որոնք կապվում են սթրեսային իրավիճակի և մեդիա մանիպուլյացիաների հետ: Նշվում է, որ նոր բացասական արժեքների ներդրումը հիմնականում կատարվում է մեդիայի՝ ներառյալ սոցիալական ցանցերի միջոցով՝ անհանդուրժողականության, ատելության մթնոլորտ ստեղծելու հետևանքով:

Քննարկման մասնակիցները նաև նշել են մի շարք արժեքներ, որոնք կցանկանային տեսնել բոլոր երիտասարդների շրջանում հատկապես հետպատերազմյան ժամանակահատվածում: Ըստ նրանց՝ այս շրջանում անհրաժեշտ են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, պայքարելու համառությունը, անձնական արժանապատվությունը, հավատարմությունը, համախմբվածությունը, փոխադարձ հոգատարությունը, հարգանքը, նորարարական ոգին, սերը և հայրենասիրությունը: Ընդ որում, հետաքրքրական է, որ ցանկալի արժեքներից խոսելիս երիտասարդները հիմնականում դրանք դիտարկում են մակրո մակարդակում ունեցած օգտակարության և անհրաժեշտ լինելու համատեքստում՝ պետությունը ճգնաժամային վիճակից դուրս բերելու, կայունացնելու, զարգացնելու և առաջ գնալու տեսանկյունից: Օրինակ՝ «պետք է հավատարիմ լինել, քանի որ պատերազմի ժամանակ կար դրա պակասը կամ անձնական արժանապատվությունը պետք է վերածվի ազգային արժանապատվության կամ նորարարական ոգի, հարգանք, կամքի ուժ ունենալու դեպքում կհասնենք հաջողությունների»:

«Նյութական բարեկեցության հետևից շատերն են ընկած ու մեծապես խանգարում ա մյուս բաներին, իհարկե կարևոր է, քանի որ առանց սրա հնարավոր չի ապրել, բայց առաջնային դարձնելը հետ է մղում հասարակությանը»: (Կին)

«Նորարարական ոգին ամենաշատն է պետք, որ բոլորս տեսանք, թե ինչքան կարևոր են տեխնոլոգիաները, ու մեր գիտելիքների շնորհիվ կարող ենք հասնել հաջողությունների: Կամքի ուժը՝ ամեն մեկն իր ոլորտում անի առավելագույնը՝ չխանգարելով ուրիշներին»: (Տղամարդ)

«Հայրենասիրությունը, սերը պատերազմից հետո պիտի ավելի շատ արժևորենք ու հարգանքը ուրիշի հանդեպ, ու կամքի ուժն ու պայքարելու համառությունը, որ կարողանանք առաջ գնալ»: (Կին)

Առհասարակ, այնպիսի ճգնաժամերը, ինչպիսիք են համավարակը, պատերազմը, իրենց ազդեցությունն են ունենում հասարակական բոլոր ոլորտների և հասարակության

բոլոր խմբերի վրա: Երիտասարդները հատկապես են կրում վերջիններիս ազդեցությունը, քանի որ հասարակության այս տարիքի ներկայացուցիչներն են, օրինակ, ամենաշատը ներգրավված այն ոլորտներում, որոնք ավելի շատ են տուժում նմանատիպ ճգնաժամերից՝ կրթական համակարգ, աշխատաշուկա և այլն:

Քննարկմանը մասնակցած երիտասարդները նշում են, որ կրթական համակարգի և անձամբ իրենց կրթության վրա մեծ ազդեցություն է ունեցել հատկապես համավարակը, քանի որ սկզբնական շրջանում հնարավոր չի եղել արդյունավետ կազմակերպել առցանց դասերը: Բացի այդ, մի շարք երիտասարդներ Քովիդի պատճառով չեն կարողացել ուսումնական կամ գիտական ծրագրերի մասնակցել արտասահմանում: Համավարակի պատճառով նաև շատ երիտասարդներ կորցրել են իրենց աշխատանքը և ներկայումս էլ դժվարանում են նոր աշխատանք գտնել: Քննարկման մասնակիցները նշում են, որ պատերազմի պատճառով որոշ կամավորագրված երիտասարդների իրավունքների ոտնահարում է տեղի ունեցել, քանի որ աշխատավարձերն այդ ընթացքում չեն վճարվել կամ մասնակի են վճարվել: Կրթության ոլորտի վրա էլ պատերազմն ազդել է այնքանով, որ հնարավոր չէր լինում դասերի վրա կենտրոնանալ: Հետաքրքրական է, որ մի կողմից համավարակը և պատերազմը խափանել են կրթական համակարգը, բայց մյուս կողմից հնարավորություն են տվել որոշ երիտասարդների սկսել կամավոր աշխատանքներ իրականացնել՝ օգնելով վերջիններիցս առավել տուժած մարդկանց, ընտանիքներին:

Բացի նշված ոլորտներից, և՛ համավարակը, և՛ պատերազմը անորոշություն են առաջացրել մարդկանց առօրյա կյանքում և ապագայի հանդեպ: Բոլոր մասնակիցներն էլ նշում են, որ վերադարձել են իրենց հիմնական անելիքներին՝ կրթություն, աշխատանք, և առօրյային: Որևէ էական փոփոխություններ չեն եղել: Սակայն, առկա են հոգեբանական փոփոխություններ, և պատերազմի թեման շարունակում է մնալ առաջին պլանում, ինչն էլ խանգարում է լիովին կենտրոնանալ աշխատանքի կամ կրթության վրա: Ըստ մասնակիցների՝ պատերազմի արդյունքում երիտասարդները սկսել են վերարժևորել իրենց աշխատանքն ու գործունեությունը և գիտակցել, որ ամեն ինչ պետք է ավելի լավ անել, քան նախկինում: Սակայն պետք է նաև նշել, որ պատերազմից հետո վերարժևորման, աշխատանքն ավելի լավ անելու մասին բոլորն են խոսում և շատ հաճախ, սակայն չի խոսվում այն մասին թե ինչպես են վերարժևորում, ինչպես են իրենց աշխատանքը ավելի լավ անում, թե դրանց հասնելու ինչ գործողություններ են իրականացվում: Նշվածները չափելի դարձնելն ու այդ փոփոխությունն ավելի խորքային ուսումնասիրելը լրացուցիչ հետազոտություն է պահանջում:

«Բոլորիս առօրյան մեծ հաշվով փոխվել ա: Էն ժամանակ, որ չէինք պատկերացնում, որ հնարավոր են սենց ճգնաժամեր, մեր առօրյան պլանավորում էինք՝ առանց հաշվի

առնելու, բայց հիմա մոտակա, հեռակա պլաններ կազմելիս հաշվի եմ առնում, թե նման ճգնաժամերը ինչպես կազդեն պլանների վրա»: (Կին)

«Աշխատանքի վերադառնալու առումով, տեսանելի ինչ-որ բաներ չեն փոխվել, բայց հոգեբանական առումով մեծ փոփոխություններ են եղել մարդկանց մեջ: Շատերը, ովքեր որ հարազատ են կորցրել կամ չեն կորցրել, հոգեբանական ճնշված վիճակում են»: (Տղամարդ)

«Վերադարձել եմ աշխատանքին, նույնն եմ անում, բայց վերաարժևորված, այլ կերպ եմ սկսել գնահատել այն, ինչ անում էի, դրական առումով: Գիտակցում եմ, որ շատ գործ կա անելու ու ավելի լավ անելու»: (Կին)

Մասնակիցների հետ նաև քննարկվել է այս ճգնաժամերի պատճառով Հայաստանից հեռանալու հարցը: Անորոշությունն ու անկայունությունը գործոններ են, որոնք կարող են արտագաղթի պատճառ դառնալ: Երիտասարդների կարծիքով, շատերը սպասում են սահմանների բացվելուն, որպեսզի կարողանան գնալ Հայաստանից, քանի որ այստեղ չեն կարողանում աշխատանք գտնել կամ էլ կայուն և անվտանգ չեն համարում միջավայրը: Նշվում է, որ հատկապես արական սեռի ներկայացուցիչներն են ցանկանում հեռանալ Հայաստանից, քանի որ պատերազմի սպառնալիքի պատճառով խախտված է նրանց անվտանգ ապրելու իրավունքը: Մասնակիցների մի մասը նշում է, որ իրենց՝ մնալու կամ Հայաստանից գնալու որոշումը կապված է երկրում կայունության հաստատման հետ: Եթե մոտակա ամիսների ընթացքում իրավիճակը կայունանա, ապա նրանք կմնան այստեղ, եթե ոչ, ապա կմտածեն հեռանալու մասին: Նրանց մի մասն էլ նշում է, որ Հայաստանից կգնան միայն կրթություն, նոր գիտելիքներ և հմտություններ ստանալու և այդ ստացածը Հայաստան բերելու պայմանով: Շատերը ընդգծում են, որ ուզում են մնալ և ինչ-որ բան փոխել Հայաստանում, սակայն հստակ գործողություններ չեն նշում և չեն մանրամասնում, թե ինչպես պետք է դա անեն: Երիտասարդների մի մասը Հայաստանում զարգացման, առաջ գնալու հեռանկարներ չի տեսնում, իսկ մյուս մասը գտնում է, որ հնարավորությունները շատ են, քանի որ բազմաթիվ ոլորտներ զարգացման կարիք ունեն: Պարզապես պետք է կարողանալ հասկանալ խնդիրները և այդ ուղղություններով աշխատել:

«Համաձայն եմ, որ մարդու ինքնազարգացման, դրական աճի համար հարկավոր է այլ երկրներ գնալ, նոր գիտելիք ձեռք բերել, բայց էդ ամբողջը հավաքելով արդեն օգտագործես քո երկրի զարգացման համար: Հիմա կարևոր ա, որ երիտասարդները վերադառնան իրենց երկիրը»: (Կին)

«Կան մարդիկ, ովքեր մնացել են, ինչ-որ բան փոխել ու բախվել են էս իրականության հետ: Դա ինձ վրա շատ ազդում է: Բայց կա նաև էն միտքը, որ պետք ա մնամ, ինչ-որ բան փոխեմ: Ներքին կոնֆլիկտ ա մտքերի: Ժամանակի հարց ա, մոտակա մի

տարվա ընթացքում կհասկանանք՝ ինչ պետք ա անել, էս պահին իմպուլսիվ քայլեր պետք չի անել»: (Տղամարդ)

Անդրադառնալով ճգնաժամային իրավիճակներում երիտասարդների դերին՝ մասնակիցները նշում են, որ այն նման իրավիճակներում բավականին մեծ է: Բերելով պատերազմի օրինակը՝ շեշտվում է, որ ինչպես առաջնագծում, այնպես էլ թիկունքում մեծամասամբ երիտասարդներն են ակտիվ՝ հիմնականում կռվում են երիտասարդները, թիկունքի աշխատանքների բավականին մեծ մասը նույնպես իրականացնում են երիտասարդները: Պատերազմի ընթացքում, ըստ քննարկման մասնակիցների, մեծ էր երիտասարդների նախաձեռնողականությունը, կամավորությունն ու համախմբվածությունը: Սակայն, նրանք նաև մի շարք հմտություններ ու կարողություններ են առանձնացրել, որոնք ցանկալի են, որ երիտասարդները ունենան՝ ավելի հեշտ կազմակերպվելու և դժվարություններին դիմակայելու համար: Ամենաշատը նշվում են արագ կողմնորոշվելու ունակությունը, ճկունությունը և ռազմավարական մտածողությունը: Երիտասարդները պետք է սովորեն, թե ինչպես ճգնաժամային իրավիճակներում արագ մոբիլիզացիա և ռեսուրսների հավաքագրում իրականացնեն և կարողանան կառավարել ժամանակն ու հավաքագրված նյութական և մարդկային ռեսուրսները:

Որպեսզի երիտասարդները դառնան խնդիր լուծող, ինքնակազմակերպվող և ինքնուրույն որոշում կայացնող, նախ պետք է նրանց դերը բարձրացնել և նրանց մի շարք արժեքներ և հմտություններ փոխանցել: Ընդ որում, նշվում է, որ այդ հմտություններն ու կարողությունները պետք է ուղեկցվեն արժեքային համակարգի ձևավորմամբ: Մասնավորապես, երիտասարդները պետք է հասկանան, թե ինչ է արժեքը, պետք է սովորեն և կարողանան ձևակերպել, թե ինչ արժեհամակարգով են ցանկանում ապրել: Բացի այդ, նրանց նաև պետք է սովորեցնել խնդիրներ և նպատակներ ձևակերպել, քննադատական մտածողությունը զարգացնել: Արժեքներ, խնդիրներ և նպատակներ ձևակերպելու գործընթացում կարևոր է սովորել ինքնառեֆլեքսիա կատարել՝ երբ երիտասարդը կկարողանա գնահատել իր կարողությունները, գիտելիքներն ու ցանկությունները, կհասկանա, թե ինչ է ուզում և ինչ կարող է անել և ինչ ուղղությամբ կարող է շարժվել: Երիտասարդներին անհրաժեշտ հմտությունների շարքում կարևորվում են համառությունը, ճկունությունը, նախաձեռնողականությունը, թիմային աշխատանքը, առաջնորդությունը, մեդիագրագիտությունը, հաղորդակցությունը, նոր տեխնոլոգիաների կիրառումը:

Ինքնուրույնություն ունենալու համար, ըստ մասնակիցների, պետք է երիտասարդներին դեռևս փոքր, դպրոցական տարիքից հնարավորություն տալ ինքնուրույն որոշումներ կայացնել՝ ինչ խմբակներ հաճախել, ավագ դասարաններում ինչ առարկաներ, ինչ մասնագիտություն ընտրել և այլն: Այս գործընթացում կարևոր է, որ

ծնողները չսահմանափակեն երեխաներին և ավելի քիչ պարտադրեն իրենց ցանկությունները, փորձեն հասկանալ, թե ինչ է իրականում ուզում իրենց երեխան: Ինքնուրույնություն ձեռք բերելուն կարող է նպաստել նաև ուսանողական տարիքից աշխատելը՝ ինչպես վարձատրվող, այնպես էլ կամավոր: Կամավորությունը հատկապես կարևորվում է, քանի որ բացի նոր գիտելիքներից, հմտություններից, հաղորդակցությունից նաև մեծացնում է երիտասարդների տեղեկացվածությունը և իրազեկվածությունը ինչպես տարբեր ծրագրերի, այնպես էլ սոցիալական և համայնքային խնդիրների մասին: Սակայն, խնդիրն այն է, որ ոչ բոլոր համայնքներում կան կամավորություն անելու հնարավորություններ, և ոչ բոլոր երիտասարդներին են հասանելի այդ ծրագրերը:

Երիտասարդներին ինքնուրույնություն սովորեցնելուց բացի, պետք է նաև սովորեցնել լինել պահանջատեր: Վերջինիս համար անհրաժեշտ է, որ երիտասարդները տեղյակ լինեն նախ իրենց համայնքների խնդիրներից, կարողանան ձևակերպել դրանք և նաև տիրապետեն պահանջատեր լինելու մեխանիզմներին և գործիքներին:

«Պետք է երիտասարդը տեղյակ լինի խնդիրներից, որ լուծումներ տա դրանց: Որոշ կազմակերպություններում կարող են լինել կամավորների խումբ, բայց ոչ բոլորին է հասանելի կամավորություն անելը: Համայնքներ կան, որ չկան հիմնադրամներ, կամավորության հնարավորություններ: Ինձ համար կարևոր է, որ դասընթացներ լինեն այն համայնքներում, որտեղ դրանք հասանելի չեն»: (Կին)

«Եթե երիտասարդն ուզում է ինչ-որ բան փոխի, ինչ-որ բանի հասնի, պետք ա հստակեցնի, թե ինչ ա ուզում, չվախենա ինչ-որ բան կազմել, նախաձեռնել, մի անգամ կստացվի, մի անգամ ոչ, բայց պետք ա հարց տա՝ ինչ եմ ուզում անել, ու իր ուղիով գնա»: (Կին)

«Պետք է գտնել լուծումները, տարբերակները: Մեզանից յուրաքանչյուրը չպետք է էմոցիոնալ դաշտում խեղդի իրեն, ինքնատիրապետում, ինքնահիրազեկում՝ ինչ եմ ես կարող: Եթե կատարի ինքն իր համար SWOT վերլուծություն, ու ինչ կարող եմ անել, ինչը ինձ կօգնի, կկարողանանք գնալ առաջ»: (Տղամարդ)

Երիտասարդների դերն ու մասնակցությունը բարձրացնելու հարցում մեծ է ՏԻՄ-երի և ՔՀԿ-ների դերը: ՏԻՄ-երի և ՔՀԿ-ների՝ երիտասարդներին վերաբերող ծրագրերը, ըստ քննարկման մասնակիցների, պետք է ոչ թե ձևական լինեն, այլ շոշափելի, և հետագայում երևան նաև դրանց արդյունքները, օրինակ՝ երիտասարդները տեսնեն, որ իրենց ձայնը լսելի է դարձել, ծրագրից հետո որևէ փոփոխություն է տեղի ունեցել: Նաև նշվում է, որ ՔՀԿ-ների կողմից աշխատանքը ավելի շոշափելի և տեսանելի է, մինչդեռ ՏԻՄ-երը գրեթե ուշադրություն չեն դարձնում երիտասարդներին, նրանց կարիքներին և նրանց ներգրավմանը տարբեր գործընթացներում: Այն երիտասարդները, որոնք ծանոթ

են իրենց ՏԻՄ-երի ռազմավարական փաստաթղթերին, նշում են, որ այնտեղ երիտասարդների մասին կամ ոչինչ գրված չէ, կամ էլ գրված կետերը անհեթեթ են: Որևէ ծրագիր իրականացնելու դեպքում էլ չեն ելնում երիտասարդների կարիքներից և պահանջմունքներից:

Քննարկման մասնակիցները ՏԻՄ-երից և ՔՀԿ-ներից ակնկալում են, որ վերջիններս ավելի շատ երիտասարդների ներգրավեն իրենց ծրագրերում, ծրագրերի ավարտից հետո անընդհատ կապ պահպանեն մասնակիցների հետ, ծրագրեր իրականացնելուց առաջ կարիքի գնահատում անեն, ծրագրերն իրականացնելիս հաշվի առնեն աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները, զարգացումներն ու միտումները: Հատկապես ՏԻՄ-երի առումով մասնակիցները կցանկանային, որ ավելի շատ երիտասարդներ ներգրավվեն վերջինիս աշխատանքներում և ռազմավարական փաստաթղթերը մշակելիս հաշվի առնեն այդ երիտասարդների պահանջմունքներն ու փորձը, ինչը ավելի թիրախային կդարձնի ծրագրերը:

Մյուս կողմից նշվում է, որ երիտասարդները նույնպես պետք է շահագրգռված լինեն պահանջելու և նախաձեռնելու իրենց ավելի շատ ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացներում և ՏԻՄ-երի ծրագրերում, և չսպասեն, որ դա տեղի ունենա միայն վերևից: Սակայն, ինչպես վերը նշվել էր՝ ներքևից վերև փոփոխություններ իրականացնելու համար նույնպես պետք է ունենալ հմտություններ և տիրապետել մի շարք գործիքների: Այստեղ կրկին նշվում է երիտասարդների՝ իրենց նպատակները և ցանկությունները ձևակերպել կարողանալու խնդիրը: Որոշ մասնակիցներ նշում են, որ մի խումբ երիտասարդներ ակտիվ են ամեն տեղ, սակայն այդ ակտիվությունը ավելի արդյունավետ կլինի, եթե հասկանան, թե հստակ որ ուղղությամբ են ցանկանում աշխատել և շեշտը դնեն այդ ուղղությամբ փոփոխությունների վրա:

«Մինչև հիմա առհասարակ շատ քիչ ա եղել երիտասարդ ավագանիների քանակը: Մի ժամանակ կար երիտասարդական թև բացելու ծրագիրը, բայց չեղավ: Բայց կուզենամ, որ հնգամյա պլանը կազմելիս երիտասարդների փորձը հաշվի առնվի: Մենք ինքներս էլ ուզում ենք, որ հկ-ները երիտասարդների հետ դասընթացներ, կապեր, հարաբերություններ ստեղծեն ու չվատնեն այդ գումարները»: (Կին)

«Համայնքային զարգացման փաստաթղթերում շատ բաներ կարող ես գտնել, որ ուղղակի գրված ա: Թալինի զարգացման հնգամյա պլանում մեկ բառ կա երիտասարդների մասին, գրված ա՝ այնպես անել, որ Թալինի խելացի երիտասարդները չգնան համայնքից: Ու հասկանում ես, թե ինչ վերաբերմունք ունեն երիտասարդների նկատմամբ, ինչ պատկերացում ունեն: Որպեսզի երիտասարդները շատ տեսնեն իրենց անունը զարգացման պլաններում ու հասկանան, որ համայնքը իրենց մասին հոգատար ա, պետք ա խեղդենք իրենց, որ իրանք չորոշեն խելացի ենք, թե չէ, պետք ենք, թե չէ»: (Տղամարդ)

Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում որոշ մասնակիցների կողմից դիտարկվում է նաև խաղաղության համատեքստում: Նշվում է, որ նախ պետք է հասկանալ, թե երիտասարդները ինչ պատկերացումներ ունեն խաղաղության վերաբերյալ, որից հետո մտածել հնարավոր ծրագրերի մասին: Բացի այդ, ՔՀԿ-ներում, ՏԻՄ-երում ներգավվածության շնորհիվ երիտասարդները ավելի շատ ազդեցություն կարող են ունենալ ինչպես խաղաղության հաստատման, այնպես էլ պետության զարգացման գործընթացում:

«Եթե ուզում ենք երիտասարդներին ընդգրկել խաղաղության գործընթացներում, հարց է առաջանում, թե երիտասարդները ուզում են խաղաղություն, թե պատերազմ: Մի մասը չեզոք է, մի մասը դեմ է խաղաղությանը, մի մասը կողմ է: Վերջին դեպքերից հետո մի մասը սկսել են կողմ լինել խաղաղությանը: Պետք է հասկանալ՝ երիտասարդները ինչ են ուզում, որ իմանան՝ որ ուղղությամբ շարժվենք»: (Տղամարդ)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Երիտասարդների հետ խմբային քննարկումների արդյունքները ցույց են տալիս, որ հետպատերազմյան Հայաստանում հանդուրժողականությունը, պայքարելու համառությունը, անձնական արժանապատվությունը, հավատարմությունը, համախմբվածությունը, փոխադարձ հոգատարությունը, հարգանքը, նորարարական ոգին, սերը և հայրենասիրությունը այն արժեքներն են, որոնք պետք է գերակշռեն երիտասարդների շրջանում և նպաստեն պետության՝ ճգնաժամային իրավիճակից դուրս գալուն:

Չնայած պատերազմը և դրանից առաջ համավարակը խափանել են ուսումնական գործընթացն ու պլանները, ինչպես նաև այս կամ այն չափով ազդել աշխատանքի վրա, սակայն այդ ընթացքում մեծացել է նաև կամավորական աշխատանքներ կատարելու պատրաստակամությունն ու նախաձեռնողականությունը: Պատերազմից հետո շատերի մոտ անորոշություն ու անվստահություն է ապագայի նկատմամբ, ոմանց համար մոտակա ամիսների ընթացքում պարզ կլինի երկրից հեռանալու կամ չհեռանալու որոշումը, ոմանք էլ նախընտրում են մնալ Հայաստանում: Նման ճգնաժամային իրավիճակները հաղթահարելու համար երիտասարդներին անհրաժեշտ են այնպիսի հմտություններ, ինչպիսիք են արագ կողմնորոշվելու ունակությունը, ճկունությունը, ռազմավարական մտածողությունը, ռեսուրսների արագ մոբիլիզացիան և կառավարումը: Երիտասարդներին պետք է սովորեցնել քննադատական մտածողություն, խնդիրներ և նպատակներ ձևակերպել, ներգրավվել և մասնակցել որոշումների կայացման գործընթացներում: Վերջինս իրագործելու համար կարևորվում է նաև ՏԻՄ-

երի և ՔՀԿ-ների դերը: Ծրագրեր իրականացնելուց և ռազմավարական փաստաթղթեր մշակելուց առաջ երիտասարդների կարիքները գնահատելը, նրանց փորձը հաշվի առնելը կարող են մեծապես նպաստել երիտասարդների մասնակցությանը որոշումների կայացման գործընթացներում և նրանց ուղղված ծրագրերը ավելի թիրախային դարձնել:

Հետագա քննարկման կամ հետազոտությունների համար պետք է նաև նշել, որ, օրինակ, հայաստանյան երիտասարդներին բնորոշ արժեքներից խոսելիս քննարկումների մասնակիցների մի մասը հիմնականում ոչ թե նշում են, թե ինչ արժեքներ են բնորոշ երիտասարդներին, այլ, թե որ արժեքներն են կարևոր և որոնք կցանկանան, որ երիտասարդները ունենան: Այսինքն, հնարավոր է, որ պարզապես պատկերացում չունեն իրենց հասակակիցների արժեքային համակարգի մասին կամ երբևէ չեն մտածել այդ հարցի շուրջ, և հետևաբար դժվարանում են որևէ նկարագիր տալ:

Հետպատերազմյան շրջանի մասին խոսելիս շատ են նշում, որ պետք է վերարժևորել աշխատանքն ու առօրյա գործունեությունը, պետք է մնալ Հայաստանում և մի բան փոխել, սակայն, հստակ պատկերացումը, թե ինչպես է պետք դրանք անել կամ ինչպես է տեղի ունենում այդ վերարժևորումը, բացակայում է:

Բացի այդ, քննարկումների ընթացքում ՔՀԿ-ների և ՏԻՄ-երի դերի մասին խոսելիս հիմնականում ակտիվ էին այն մասնակիցները, որոնք որևէ կերպ ներգրավված են կամ ներգրավված են եղել տարբեր ծրագրերում և այս կամ այն չափով տեղյակ են տարբեր ՔՀԿ-ների գործունեությունից, որևէ ՀԿ անդամ են, ծանոթ են ՏԻՄ-երի ռազմավարությանը: Այս տեսանկյունից նաև նրանք են պատկերացնում, թե ինչ կարող են անել ՔՀԿ-ներն ու ՏԻՄ-երը, և ինչ կարելի է ակնկալել վերջիններից: Մյուս մասնակիցների պասիվությունը այս հարցի շուրջ, հնարավոր է, կապված է ՔՀԿ-ների ու ՏԻՄ-երի գործունեության մասին տեղեկացվածության պակասից:

Այսպիսով՝ հաշվի առնելով տվյալների վերլուծությունն ու քննարկումը, դուրս են բերվել հետևյալ առաջարկները:

- Երիտասարդների համար կազմակերպել դասընթացներ՝ ՏԻՄ-երի և ՔՀԿ-ների գործունեության, դերի, ՏԻՄ-երի վրա ազդեցության գործիքների և մեխանիզմների, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացներում ներգրավվելու հնարավորությունների մասին: Սա հնարավորություն կտա երիտասարդներին ինչպես տեղեկացված լինել, այնպես էլ պատկերացում կազմել նշվածների դերի, աշխատանքի, իրենց հնարավոր ներգրավվածության ձևերի մասին:
- Երիտասարդների համար կազմակերպել քննադատական մտածողության դասընթացներ, սովորեցնել խնդիրներ սահմանել և ձևակերպել, լուծման ուղիներ գտնել: Հատկապես համայնքներում փոփոխություններ մտցնելու տեսանկյունից

կարևոր է, որ երիտասարդները կարողանան հասկանալ և ձևակերպել խնդիրները և պատկերացնեն ծրագրերի իրականացման գործընթացը:

- Ստեղծել հարթակներ, որոնք տարբեր համայնքներում երիտասարդներին տեղյակ կպահեն կամավորական, կրթական և այլ ծրագրերի մասին: Շատ հաճախ երիտասարդները տեղյակ չեն լինում տարբեր ծրագրերից և նաև չգիտեն, թե որտեղ կարող են փնտրել նման ծրագրեր, այդ պատճառով էլ նրանց հասանելի չեն լինում դրանք:
- Ծրագրեր մշակելուց առաջ իրականացնել երիտասարդների կարիքների գնահատում կամ խմբային քննարկումներ, որպեսզի դրանք իսկապես լինեն օգտակար տվյալ համայնքի երիտասարդների համար: ՏԻՄ-երի դեպքում՝ հաճախ կազմակերպել քննարկումներ երիտասարդների հետ, ինչը և՛ ավելի թիրախային կդարձնի ծրագրերը, և՛ երիտասարդներին կներգրավի իրենց առնչվող և որոշումների կայացման գործընթացներում:
- Ընդլայնել երիտասարդների համար իրականացվող ծրագրերի, միջոցառումների աշխարհագրությունը՝ դրանք իրականացնելով նաև այն համայնքներում, որոնց երիտասարդներին հասանելի չեն դրանք՝ այդ համայնքներում կազմակերպությունների, հիմնադրամների կամ կամավորության հնարավորությունների բացակայության պատճառով:
- Կազմակերպել տարբեր համայնքների երիտասարդների հանդիպումներ, ինչը հնարավորություն կտա փորձի փոխանակում իրականացնել, ինչպես նաև կապեր ստեղծել տարբեր համայնքների միջև՝ բացելով համագործակցության և ազդեցության հետագա հնարավորություններ:
- Հետպատերազմյան շրջանում կազմակերպել հանդիպումներ տարբեր մասնագետների հետ, որոնց հետ երիտասարդները հնարավորություն կունենան քննարկել անորոշության հաղթահարման մեխանիզմները, ճգնաժամային իրավիճակներում տարբեր ելքեր և լուծումներ գտնելու ուղիները: